**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«29» «մարտի» 2024 թ. № 97-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-Ի N 267-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի օգոստոսի 4-ի «Անտառահատման տոմսի և անտառային տոմսի օրինակելի ձևերը և դրանց տրամադրման կարգը հաստատելու մասին» N 267-Ն հրամանի (այսուհետ՝ Հրաման) նախաբանում «ե3» բառը փոխարինել «8-րդ» բառով:

2" Հրամանի N 1 հավելվածի 1-ին կետից հանել «անտառային կոմիտեի» բառերը, իսկ «պահպանությունն ու օգտագործումն» բառերը փոխարինել «կառավարումն» բառով:

3. Հրամանի N 3 հավելվածի 3-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3"Կազմակերպության (մասնաճյուղի) կողմից կողմնակի անտառօգտագործման ընթացքում խախտում հայտնաբերելու դեպքում ձեռնարկվում են միջոցներ՝ խախտման վերաբերյալ լիազորված համապատասխան մարմին 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահելու ուղղությամբ:»

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

3/29/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«29» մարտի 2024թ.

ք. Երևան